

հեծել կուտայ *Մեռած աստուածներուն* խորագրուած բանաստեղծութեան մէջ.

*Լոկ կը տեսնեմ Աւանդութիւնն՝ որ կուլայ
Նստած կոճղի մը վըրայ:*

Սակայն Աւանդութիւնը կրնայ յառնել իր հրացայտ գրչին տակ, միս ու արիւն զգեցած, երբ առաքինի, աննենգ վճիտ ուժին գաղափարն է որ նախնական հերարձակ անտառներուն խորէն հմայաշունչ կուգայ սարսել՝ Դարուս ցրտին, անյոյգ, անիտէալ, կեղծ ներկային մէջ պարփակուած իր դժգոհ մարմինը:

Պատմական դրուագներէն դուրս, որոնք դեռ մեծ թիւ չեն կազմեր Վարուժանի գրականութեան մէջ, գեղեցկագիտական տեսակէտով *հեթանոսային* հանգամանք մը կը ձգտին ներկայացնել նաեւ առանձին բանաստեղծութիւնները, որոնք զուտ զգայական՝ յատկապէս բնութրուած արեւելեան գունազեղ պատկերներ են, առանց պատմական յաւակնութեան, կամ նոյն իսկ եւրոպական շպարուն ազդեցութեան արեւելքցիի նայուածքով ցանկացուած, եւրոպական անկիւններ՝ արեւելքի արեւով օծուած: Այսպէս են այն բանաստեղծութիւնները որ կը կոչուին *Արեւելեան բաղանիք, Ո՛վ Լալագէ, Հեթանոսական, Մեռած աստուածներուն եւ Գինարքութէն վերջ:*

Բոլոր այս հատուածները զուտ զգայաբանական յաջող պատկերներ են, հազիւ մերթ միացած համապատասխան զգացումի մը, մարդկային յայտնի յուզիչ արձագանգի մը. բայց ճաղատ գլուխով եւ պոստած յօնքերով ծերուկ ինքնակոչ բարոյախօսներն են միայն որ չպիտի տեսնէին այս շողշողուն մանրամասնութեանց ամբողջութեան մէջ՝ կուռ ձգտում մը դէպի լուսագեղ Բնութիւնը, մարդկային շնորհ ու առաքինութիւն եղած Արուեստին ներգործեամբ: Վարուժանի բնութենապաշտ առարկայական Արուեստը շատ քիչ անգամ կը ճանչնայ անձնական խուսափուկ փցուն տպաւորութիւնները, վայրկեանին անիտէալ քմահաճոյքները, անկապաշտի